



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
**Acopian Center
 for the Environment**



Ուսումնական շրջայց Հայաստանում շենքերում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և այլ էկո լուծումների վերաբերյալ

Երևան, Հայաստան – Ժամանակակից էներգաարդյունավետության լուծումներով ճարտարապետության օրինակներ տեսնելու նպատակով արտերկիր մեկնելու ժամանակները անցյալում են:

Սույն թվականի մայիսի 18 – 22-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը ՀՀ էներգետիկայի եվ բնական պաշարների նախարարության հետ համատեղ կիրականացնեն ուսումնական շրջայց շենքերում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և այլ էկո լուծումների վերաբերյալ Հայաստանում: Ծրագրի մասնակիցները Սյունիքի մարզից հանրային ծառայողների, շինարարների, գիտական աշխատողների և ՀԿ-ների անդամների 15 անձից բաղկացած խումբ է: Այս միջոցառման նպատակն է կրթելը և առ այսօր երկրի ներսում ունեցած հաջողություններին նոր ընթացք տալը:

«Առ այսօր Հայաստանում մենք ունենք մի շարք հաջողություններ և լավագույն կիրառումներ կապված կառուցապատ միջավայրում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և ընդհանուր էկո լուծումների հետ: Հաջողություններ, որոնք ճանաչվել են համաշխարհային հավաստագրեր տրամադրող գործակալությունների կողմից», - նշում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար պրն. Հայկ Հարությունյանը:

Ազգային շրջայցի նպատակն է մասնակիցներին ցույց տալ շենքերում էներգաարդյունավետության լուծումների հաջողված իրականացումները կամ փորձերը, ինչպես նաև, օգտագործելով այս ազգային շրջայցը, լրատվամիջոցների օգնությամբ շենքերում էներգաարդյունավետության վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացումը՝ ազգային և տեղական մասշտաբով: Ուսումնական շրջայցի մասնակիցները կայցելեն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձնական շենքեր, Ավետիսյան դպրոցը և Դիլիջանի միջազգային դպրոցը, Գյումրու Կարիտաս վերականգնողական կենտրոն, ինչպես նաև Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսազազի հավաքման և այրման կայան:

«Հայաստանի ամերիկյան համալսարանի և առհասարակ համալսարանների դերը պետք լինի հավաքել այս փորձերն ու դասերը և դարձնել դրանք օգտակար և հասանելի հանրության համար», - նշում է ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն պրն. Ալեն Ամիրխանյանը:

Ուսումնական շրջայցը կազմակերպվել է ԵՄ Սևծովյան ավազանի շենքերի էներգաարդյունավետության նախագծի շրջանակներում, որի նպատակն է տեղական վարչական կարողությունների ամրապնդման միջոցով ստեղծել ուժեղ ռեգիոնալ գործընկերություն և համագործակցություն Սևծովյան ավազանի երկրների միջև շենքերում էներգաարդյունավետության ոլորտում, որը տեղական և գլոբալ առումով խոշոր բնապահպանական և տնտեսական ազդեցություն ունի:





AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
**Acopian Center
for the Environment**



Study Tour on Energy Efficiency, Renewable Energy and Other Eco Solutions in Buildings in Armenia

YEREVAN, Armenia - Times when it was necessary to travel outside Armenia to see examples of modern energy efficient and application of renewable energy in buildings are gone.

The AUA Acopian Center for the Environment is organizing a national study tour on energy efficiency, renewable energy and other eco solutions in buildings for a group of municipal workers, builders, academics, and NGO members from Syunik region of Armenia, total 15. The goal of the event is to educate and build momentum with in-country successes to date.

“To date we have a number of successes and best practices in Armenia with respect to energy efficiency, renewable energy, and overall eco solutions to the built environment. Successes that are acknowledged by international certification bodies,” says Mr. Hayk Harutyunyan, deputy minister of RA Ministry of Energy and Natural resources.

The national study tour will allow participants to learn about implementation of green solutions in buildings as well as use the tour to raise awareness about green solutions in buildings nationally and in each city that participants will visit. The study tour participants will visit pilot buildings by UNDP, the Avedisyan and Dilijan UWC schools, the Gyumri Caritas rehabilitation center, and the Nubarashen methane harvesting plant.

“The role of the American University of Armenia and universities overall, should be to collect these practices and experiences and make them accessible and useful to the interested professionals and the public,” says Mr. Alen Amirkhanian, director of AUA Acopian Center for the Environment.

The study tour is being organized within the EU Black Sea Buildings Energy Efficiency Plan (BSBEEP) project, which aims at establishing strong regional partnerships and cooperation among Black Sea countries through the reinforcement of local administrative capacities in the sector of energy efficiency in buildings, a sector with major environmental and economic impacts locally and globally.

